ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1962 Общественные науки

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

История СССР

Երկամյա հանդեսի 5-րդ համարը սկսվում է «ՍՄԿԿ 22-րդ համագումարը և ՍՍՌՄ պատմության մասնագետների պատրաստումը» վերնագրով առաջնորդող հոդվածով:

—Բնական է,—ասված է առաջնորդողում,—որ պատմական կադրերի պատրաստումը՝ թե՛ ուսուցիչների, որոնք կոչված են ստեղծագործաբար աշակերտներին հասցնելու մարքս-լենինյան պատմագիտության նվաճումները և թե՛ գիտնականների, որոնց գործն է զարգացնել ու առաջ մղել այդ գիտությունը և պատրաստել նոր ուսուցիչներ,— այս հարցը առաջնահերթ նշանակություն ունի և արժանի է, որ նրա մասին խոսվի առանձնապես և հանգամանորեն: Այնուհետև հոդվածում բննության են առնվում այն միջոցառումները, որ անհրաժեշտ է իրագործել ՍՍՌՄ-ի պատմության գիտա-մանկավարժական կադրերի պատրաստման գործը բարելավելու համար:

Է. Բ. Դենկինան «ՍՍՌՄ-ի արդյունաբերության վերականգնման առանձնահատկությունների մասին (1921—1925)» վերնագրով հոդվածում հատկապես ծանր արդյունաբերության օրինակով ցույց է տվել վերականգնման պրոցեսի սոցիալիստական բնույթի հիմնական գծերն ու առանձնահատկությունները՝ ի տարբերություն կապիտալիստական երերների հետպատերազմյան վերականգնման պրոցեսի:

1870-ական թվականների առաջին կեսի ռուսական ռևոլյուցիոն շարժման մեջ առաջատաղեր է խաղացել նարոդնիկների այն ընկերությունը, որը պատմության մեջ հայտնի է «Զայկովցիների խմբակ» անունով: Պրոպագանդայի այդ մեծ ընկերության գործունեությանն է նվիրված Ն. Ա. Տրոիցկու հոդվածը, որտեղ բննության են առնված ընկերության զարգացման կուրսորագույն փուլերը և նրա գաղափարական-կազմակերպչական հիմունքները, վեր է հանված այն դերը, որ նա խաղացել է ռուսական ազատագրական շարժման մեջ:

Ն. Յա. Մերպերտը, Վ. Տ. Պաչուտոն և Լ. Վ. Չերեպնինը Չինգիզ-խանին ու նրա հաջորդներին վերաբերող ծավալուն հոդվածում ճշում են, որ Չինգիզ-խանի սկսած և նրա հետնորդների չարունակած արյունոտ գործը բանկ նստեց ռուս ժողովրդի և մեր Հայրենիքի մյուս ժողովուրդների վրա, նրանց բերեց անհամար բրվավորություններ, ուստի որոշ պատմաբաններ իզուր են ջանում Չինգիզ-խանի գործողությունները արդարացնել նրանով, թե նա իր վերտվեց ավատական ներփակվածությանը և նրպատեց ժողովուրդների մերձեցմանը: Այդ պատմաբաններն անտեսում են այն, որ Չինգիզ-խանի նվաճումները, մայրայելով մի շարք երկրների էկոնոմիկան, բազում տասնամյակներով արգելակեց նրանց համախմբումն ու մերձեցումը: Չինգիզ-խանի և նրա հետնորդների բռնատիրության դեմ ժողովուրդների ազատագրական պայքարը մեծագույն առաջադիմական գործ էր:

Հանդեսի «Հաղորդումներ» բաժնում գետեղված է Ա. Պ. Ստեկլովի «Կովկասյան ռազմաճակատի թիկունքային կայազորների գինվորների զանգվածները Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի համար մղված պայքարում» հոդվածը:

«Ռուս եղբայրների հետ ուս-ուսի տված» վերնագրով հոդվածում Ա. Ա. Կուզնեցովի հաղորդած փաստերը վկայում են այն ավանդի մասին, որ Իտալիայի ինտերնացիոնալիստները բերել են մեր երկրում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար մղվող մարտերում:

Հրապարակված են նաև հետևյալ հաղորդումները. Ա. Մ. Անֆիմով «Մայրաքաղաքային հողագործությունը ցարական Ռուսաստանում», Ն. Դ. Բուժկանեց «1861 թ. ռևոլյուցիոն ընդհատակին Ն. Ա. Դոբրոլյուբովի մասնակցության մասին», Ա. Բ. Զակս «Պատմական պրոֆիլի բանաստեղծները 1917—1934 թթ.»:

«ՍՍՌՄ-ի պատմության ուսումնասիրումն արտասահմանում» բաժնում «Նորոգված լեգենդ» վերնագրով տպագրված է Ա. Ի. Վոլոդինի հոդ-

վածը արդի բուրժուական պատմագրության կողմից Ա. Ի. Հերցենի ժառանգության լուսաբանման մասին:

—Այսօր, ինչպես և կես դար առաջ,—ասված է հոդվածում,—երբ Վ. Ի. Լենինը առաջին անգամ գիտականորեն բնորոշեց Հերցենի «իսկական պատմական տեղը», ուս մեծ մտածողի ստեղծագործական ժառանգությունը գաղափարական սուր պայքարի առարկա է հանդիսանում: Մինչդեռ, մարքսիստ հետազոտողները ոգտել են բացահայտել Հերցենի իսկական կերպարը, ԱՄՆ-ում, ԴՖՌ-ում, Անգլիայում և Ֆրանսիայում լույս տեսած աշխատություններում խեղաթյուրվում են նրա հայտնած գաղափարները, հեղափոխական ու սոցիալիստ Հերցենը պատկերվում է, որպես հեղափոխության ու կոմունիզմի թշնամի:

ВОПРОСЫ ИСТОРИИ

Բուրժուական հետադեմ պատմաբանների գործերում նկատելի տարածում է գտել այն առասպելը, թե 1920—21 թթ. Սովետական պետության արտաքին քաղաքականությունը իր շեշտակի, հարկադրական շրջադարձ է գործել «ազրեսիվ» արտաքին քաղաքական սկզբունքներից դեպի խաղաղ գոյակցությունը: Ամսագրի 9-րդ համարում Վ. Ա. Շիշկինը «Բուրժուական պատմագրությունը և խաղաղ գոյակցության պրոբլեմը» հոդվածում բացահայտել է արդի բուրժուական պատմագրության այդպիսի մի քանի միտումներ, որոնց օգնությամբ իմպերիալիզմը ձգտում է ժողովրդական զանգվածներին հոգեվոր գերության մեջ պահել:

Տվյալ հարցի առթիվ հոդվածում քննարկված բուրժուական հեղինակների առավել հայտնի աշխատությունների վերլուծությունը համոզում է, որ 1920—21 թթ. ՍՍՌՄ-ի կողմից դեպի խաղաղ գոյակցություն կատարված «հարկադրական անցման» կեղծ առասպելը Սովետակոն Միության դեմ մղվող գաղափարական պայքարի ձևերից մեկն է:

Պ. Յա. Ալեշկինի և Վ. Կ. Գոլովնիկովի հոդվածում փաստաթղթերի հիման վրա հեղինակները փորձել են լուսաբանել 1812 թ. հայրենակոն պատերազմի ժամանակ Մոսկվայի ժողովրդական աշխարհազորի պատմության մի քանի կողմեր, աշխարհազոր, որին վիճակվեց շատ կարևոր դեր խաղալու՝ առաջիններից մեկը համալրելով գործող բանակի շարքերը և նրա հետ միասին մասնակցելով Բորոդինոյի ճակատամարտին:

Ակադեմիկոս Մ. Ն. Տիխոմիրովը տարեգրությունների վկայությունների հիման վրա կատարած տոմարական հաշվումների միջոցով պարզել է, որ 860 թվականը պետք է համարվի «Ռուսաց պետության (Русская земля) սկզբնավորման» հիմնական և ճշգրիտ տարին, որը պետք է նշվի որպես մեր Հայրենիքի պատմության մեծ և հիշարժան տարեթիվ:

Ն. Ն. Բոլխովիտինովը իր հոդվածում քննադատաբար վերլուծել է Ֆրեդերիկ Ջեկսոն Տերնների «Շարժական սահմանների» արատավոր տեսությունը, որը ամերիկյան բուրժուական պատմագրությունն օգտագործում է ազգային և համաշխարհային պատմության ամենաբազմազան հարցեր լուծելիս:

Դանիայի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի անդամ Ալֆրեդ Սենսենի հոդվածից կարելի է իմանալ, որ ֆաշիստական օկուպացման տարիներին Դանիայի ժողովուրդը վճռականորեն սահմանազատվել է կառավարող շրջանների պաշտոնական քաղաքականությունից և ակտիվ դիմադրություն է ցույց ավել օկուպանտներին:

Հրապարակումներ բաժնում «Եվրոպական դիվանագիտությունը և Սերբիան 19-րդ դարի 60-ական թթ. սկզբներին» վերնագրի տակ հրապարակված են դիվանագիտական փաստաթղթեր, որոնք կապված են թուրքական լծի դեմ սերբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի կարևոր էպիզոդներից մեկին, երբ 1862 թ. հուլիսին թուրքերի կողմից Բելգրադը գնդակոծելուց հետո, որն առաջ բերեց սերբ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման նոր վերելք, ուս դիվանագիտության օգնությամբ ձեռք բերվեցին այնպիսի որոշումներ, որոնք յրջորեն նպաստեցին Սերբիայի անկախության նվաճմանը: Ամսագրի այս հատորում հրապարակված է նաև 1953—61 թթ. «Բյուզանդական պարբերականներ» տեսությունը, գրախոսություն Միլանում հրապարակված Պ. Ռոսի «Պատմությունը և պատմականությունը ժամանակակից փիլիսոփայության մեջ» գրքի մասին և այլ նյութեր:

Ամսագրի 10-րդ համարում զետեղված է մի ընդարձակ հոդված՝ նվիրված «Հայրենական Մեծ պատերազմի պատմության» 3-րդ հատորի լույս ընծայմանը:

Մ. Լ. Ֆեոդորովիչի «Պետկապիտալիզմը սովետական հետազոտողների լուսաբանությամբ» հոդվածում քննության է առնվում անցման շրջանում պետկապիտալիզմի սոցիալ-տնտեսական

Լության հարցը. ցույց է տրված նրա դերը մեր երկրում պետկապիտալիզմի օգտագործման կոնկրետ ձևերը:

Ինչպես հայտնի է, պետկապիտալիզմի գրոբլեմը լայնորեն լուսաբանված է 20-ական թվականների սոցիալ-տնտեսագիտական գրականության մեջ: Սակայն այդ հարցի նկատմամբ ուշադրությունը առանձնապես բուլացավ Ստալինի անձի պաշտամունքի շրջանում: Հոդվածագիրը գտնում է, որ անցման շրջանում կապիտալիստական տարրերի օգտագործման սովետական փորձը սոցիալիստական երկրների կոլեկտիվ փորձի մի մասն է:

«1812 թ. Հայրենական պատերազմի պատմության մի քանի հարցեր» հոդվածում Լ. Դ. Բեկերովին ցույց է տալիս, որ Նապոլեոնի բանակի պարտությունը պատահականություն չէր, որ այն պայմանավորված էր քաղաքական, տնտեսական ու ռազմական մի շարք գործոններով:

Արևմտագերմանական ռևանշիստները, այսպես կոչված օստֆորշերները (գերմ. Ostforschung—Արևելքի ուսումնասիրում), ասված է Վ. Տ. Պաշուտոյի «Ռուսաստանի պատմության գերմանական նեոֆաշիստական կոնցեպցիայի ակունքները» հոդվածում, իրենց կողմից Ռուսաստանի պատմությամբ զբաղվելը համարում են կոմունիզմի գաղափարախոսության դեմ մղվող քաղաքական պայքարի ձևերից մեկը:

Կ. Լյապաերի «1934 թվականի լեհ-գերմանական համաձայնագրի մասին» հոդվածում հետազոտվում է համաձայնագրի կնքման պատմությունը, համաձայնագիրը, որն այն ժամանակվա Լեհաստանի կառավարող շրջանների հակազգային, ռեակցիոն արտաքին քաղաքականության օրինակներից մեկն էր, և որն ի վերջո, հանգեցրեց նրանց կրախին:

«Պատմագիտությունը ՍՍՌՄ-ում» բաժնում գրախոսություններ են տպագրված Ա. Ֆ. Խավինի «Համառոտ ակնարկ ՍՍՌՄ-ի ինդուստրացման պատմության», Ա. Վ. Կոլցովի «Լենինգրադի գիտնականները բլոկադայի տարիներին (1941—1943 թթ.)», Հ. Ս. Անասյանի «Հայկական մատենագիտություն», «ՍՍՌՄ արտաքին քաղաքականության փաստաթղթերի» 5-րդ հատորի և այլ աշխատությունների մասին:

Ամսագրի այս համարում հրապարակված է նաև 1961 թվականին հաստատված դոկտորական դիսերտացիաների ցուցակը:

Вопросы истории КПСС

Սրկամսյա հանդեսի 4-րդ համարի «Կարևոր Լատապ պարտիայի պատմության զարգացման մեջ» առաջնորդող հոդվածում ասված է, որ պարտիայի պատմագրությունը գաղափարական աշխատանքի կարևոր բնագավառներից մեկն է, ուստի անհատի պաշտամունքը հասարակական գիտությունների ոչ մի բնագավառի վրա այնպես ծանր չի անդրադարձել, ինչպես պարտիայի պատմագրության վրա: Անհատի պաշտամունքը պատմական գիտության մեջ առաջացրել է այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են պատմական եզրահանգումների աղավաղումը, դոգմատիզմը և տիրացուականությունը:

ՍՄԿՊ պատմությունը, այնուհետև ասված է հոդվածում, կոչված է օգնելու պարտիական և սովետական կադրերին՝ տիրապետելու պարտիայի կուտակած համաշխարհային պատմական փորձին, այն ստեղծագործաբար կիրառել կոմունիստական շինարարության կենսական հարցերը լուծելիս: ՍՄԿՊ պատմության բազմահատորյակի ստեղծումը, որը հրատարակվելու է ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կողմից, ողջ պարտիական հասարակայնության գործն է: Հեղինակները, հենվելով աղբյուրագիտական հարուստ բազայի վրա, պետք է մարքս-լենինյան դիրքերից լուսաբանեն մեր պարտիայի հերոսական պատմության դեպքերը՝ սոցիալիզմի և կոմունիզմի հաղթանակի համար նրա մղած պայքարի բոլոր էտապներում: Այնուհետև հոդվածում նշվում է, որ ՍՄԿՊ պատմության գիտական մշակման ժամանակ հետազոտողների գլխավոր ուշադրությունը պետք է կենտրոնացվի հեռահոկտեմբերյան շրջանի պատմության վրա:

Գ. Ի. Նիտարյանի «Դեմոկրատական ցենտրալիզմը մարքս-լենինյան պարտիայի զարգացման օրինաչափությունն է» հոդվածում մասնավորապես բարձրացված են հետևյալ հարցերը. 1. Դեմոկրատական ցենտրալիզմը ՍՄԿՊ կառուցվածքի հիմքն է նրա զարգացման բոլոր էտապներում: 2. Դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքի զարգացումը ՍՄԿՊ 22-րդ համագումարի կողմից: 3. Դեմոկրատական ցենտրա-

լիզմը մարքս-լենինյան պարտիայի դեկավար սկզբունքն է:

Ամսագրում հրապարակված են նաև Ա. Ս. Դուրինինի «Հոկտեմբերյան ռևոլյուցիան նախապատրաստող համագումարը», Մ. Ա. Իվնիցկու «Համառարած կոլեկտիվացման նախնական էտապը (1929 թ. աշուն—1930 թ. գարուն)», Յան Կոզակի (Չեխոսլովակիա) «Ազգային և դեմոկրատական ռևոլյուցիայի նշանակությունը Չեխոսլովակիայում հանուն սոցիալիզմի բանվոր դասակարգի մղած պայքարում (1945—48 թթ.)» հոդվածները:

Պատմագրություն և ազբյուրագիտություն բաժնում հրապարակված է Մ. Ա. Վարշավչիկի «ՍՄԿՊ պատմության աղբյուրագիտության մի քանի հարցերի մասին» հոդվածը, որը հրապարակված է քննարկման կարգով և ամսագրի խմբագրության կողմից պարտիայի պատմության մասնագետներին խնդրվում է հանդես գալ բարձրացված հարցերի շուրջը:

Մի շարք հետաքրքիր հոդվածներ են տպագրված նաև ամսագրի հաղորդումներ, կոնսուլտացիաներ, քննադատություն և մատենագրություն բաժիններում:

Ամսագրում հրապարակված է նաև 1962 թ. մարտ-ապրիլ ամիսներին ՍՄԿՊ պատմության հարցերի մասին ամսագրերում և առանձին գրքերով լույս տեսած հոդվածների և աշխատությունների ցուցակը:

Վ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Творчество

Ամսագրի 10-րդ համարը սկսվում է փայտի փորագրությանը նվիրված Ն. Լեմտինի հոդվածով, որտեղ հեղինակը պատմական էքսկուրս կատարելով գրաֆիկայի այդ տեսակի առաջացման շուրջը, հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է նրա հայրենիքների վրա՝ սովետական կերպարվեստում, և գտնում, որ Օստրոումովա-Լեբեդևայի, Վ. Ֆավորսկու ստեղծագործություններում աստիճանաբար փոխվեց փայտագրության բովանդակությունը:

Սովետական շրջանում «ճայեցողական վերաբերմունքը փոխարինվում է դինամիկ բնկալմամբ, կոմպոզիցիայի լարված էքսպրեսիվությունը գալիս է փոխարինելու հանգիստ ավարտվածությանը, նկարչի կողմից կյանքի բնկալումը դառնում է գործունյա և ակտիվ»: Այդ հավասարապես վերաբերվում էր և՛ հատուցային փայտագրությանը, և՛ դիմանկարին և հատկապես, գրքի նկարազարդմանը:

«Նկարիչների առաջին համագումարին ընդառաջ» խորագրի տակ իրենց ստեղծագործական խոհերով հանդես են եկել Մարշել Բրյազան (Բուխարեստ), Մարա Սուչեան (Սոֆիա) և ուրիշներ, որոնք շոշափում են այժմեական իսկապես նշանակություն ունեցող մի շարք հարցեր:

Գ. Դուրինի հոդվածը ուղղված է արվեստի միօրինակության դեմ, մի հարց, որը հուզում է ժամանակակից բոլոր կերպարվեստագետներին:

Ռեպրինցի նկարիչ Դ. Շավիկինի Մոսկվայում բացված ցուցահանդեսին նվիրված հոդվածներ է գրել Ի. Կարետնիկովան, գնահատելով արվեստագետին որպես վարպետ ջնարակարչի, դիմանկարչի և իլյուստրատորի:

Մ. Կլիմովայի և Ա. Ռիզդինայի էլույրները ամսագրում զետեղված են «Արվեստանոցներում» խորագրի տակ: Դրանք նվիրված են Յու. Կորովինի և Ա. Ստեմպկովսկու ստեղծագործական մտահղացումներին:

Նկարիչ Դ. Դամոգացկու միջոցով ամսագրի խմբագրությունը պատասխանում է ընթերցողների հարցերին՝ կապված նկարչության ուսումնասիրման սկզբնական մայրերում յուղահերկի ջրաներկի օգտագործման հետ: Կա՞ արդյոք նկարչության մեջ մեկ այլ բնագավառ, որ ավելի հմայի իր անմիջականությամբ. բան մանուկների ձեռքով ստեղծված աշխատանքներն են: Այդ խնդրի շուրջ և Սոկոլնիկիում բացված մանկական ստեղծագործության ցուցահանդեսի բազմակողմանի բացահայտմամբ հանդես է եկել Ա. Լապտեր:

Համաշխարհային մեծագույն քանդակագործներից մեկի՝ Ռոդենի ստեղծագործության մեջ յուրատիպ տեղ է գրավում «Կալեի քաղաքացիները» բազմաֆիգուր կոմպոզիցիան: Այդ աշխատանքի բազմակողմանի վերլուծությունը հնարավորություն է ստեղծում հասկանալ քանդակագործին բնորոշող առանձնահատկությունները: Արվեստագետներին ուսումնասիրողներին այդ մասին հետաքրքիր և պատկերավոր պատմում է Ն. Կոսարևան իր բնդարձակ հոդվածում: Իսկ ո՞ր արվեստասերը կարող է անտարբեր լսել դրեզդենյան Ցվինգերի անունը, որտեղ պահպանվում են սովետական մարտիկների ձեռքով փրկված համաշխարհային կերպարվեստի գանձերը: Իր տպավորություններով՝ վերականգնվող և ստեղծագործական նոր կյանք մտնող Դրեզդենի մասին, ամսագրում հանդես է եկել Ա. Ֆյոդորով-Դավիդովը:

Ամսագրում տեղավորված են հետաքրքիր հաղորդագրություններ արտասահմանյան երկրների նկարչական կյանքի մասին և ինչպես միշտ՝ բազմաբիվ վերաբերություններ:

ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ